«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջիլ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 2023-2028 թթ. զարգացման ծրագիր

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հաստատության գործունեությունը----------4

ա) Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում----------5

բ) Համապատասխանու՞մ է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին ու հնարավորություններին----------6

գ) Համապատասխանու՞մ է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին----------7

2. Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

2.1.Հաստատության շենքային պայմաններ----------8

2.2. Հաստատության նյութատեխնիկական բազան----------10

2.3.Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները----------12

2.4.Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ----------13

2.5.Հաստատության ուսումնական միջավայրը----------13

2.6.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները----------14

2.7. Հաստատության տրամադրած կրթության որակը----------15

2.8.Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները----------16

2.9.Հաստատությունում առկա հիմնախնդիրները----------17

3-8 բաղադրիչներն ըստ ոլորտների՝ աղյուսակ Չև 1

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան---------22

Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ----------23

Ոլորտ 3. Մանկավարժական համակազմ----------24

Ոլորտ 4. Աշակերտական համակազմ----------26

Ոլորտ 5. Ծնողական համակազմ----------28

Ոլորտ 6. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ----------29

Ոլորտ 7. Ուսումնական միջավայր----------31

Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքներ----------32

Ոլորտ 9. Տեխնոլոգիաներ և հնարավորություն----------33

Ոլորտ 10. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր--------34

9. Ակնկալվող արդյունքներ----------35

10. Վերահսկողության մեխանիզմներ ----------36

11. Եզրափակում----------37

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի «Պետական հանրակըր-թական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները» հաստատելու մասին N35-Ն հրամանին համապատասխան

1. Հաստատության գործունեությունը

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը սահմանում է , որ հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Այս նպատակն էլ պետք է դառնա յուրաքանչյուր դպրոցի զարգացման ծրագրի հիմնարար ուղղությունն ու բովանդակությունը:

Դպրոցի զարգացման ծրագիրն այն ռազմավարական փաստաթուղթն է, որը սահմանում է հինգ տարվա գործողությունների և միջոցառումների հստակ ժամանակացույցը, որը պետք է դառնա դպրոցի ձեռքբերումների, նպատակների խթանը և ամբողջացնի կրթության և դաստիարակության արգասաբեր պտուղները:

«Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջիլ գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 2023-2028 թվականների զարգացման ծրագիրը ներառում է պետական կրթական քաղաքականության հիմնարար պահանջները և միտված է ապահովելու սովորողի՝ անհատի և քաղաքացու լիարժեք ձևավորման գործընթացը՝ ելնելով բնակավայրի առանձնահատկություններից և կարիքներից: Զարգացման ծրագրի հիմքում դրվել են ՀՀ կառավարության կողմից հաստատված կրթության բնագավառների ռազմավարական ծրագրերը և զարգացման հայեցակարգերը:Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվել է ՀՀ օրենսդրությամբ և հաստատության կանոնադրությամբ: «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ջիլ

գյուղի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող հանրակրթական ուսումնական հաստատություն է :Դպրոցի զարգացման ծրագրի հիմքում ընկած են ժամանակակից դպրոցի պահանջները, այն է՝ մատչելի,որակյալ, բոլորին հասանելի կրթության ապահովումը, 21-րդ դարի հմտություններին տիրապետող ապագա քաղաքացիների դաստիարակությունը, հայրենասիրական ու մարդասիրական ոգով դաստիարակված անհատների ձևավորումը: Այդ անհատները կդառնան գիտելիքներով հմտացած,մասնագիտորեն կողմնորոշված երկրի քաղաքացիները:

Ժամանակակից դպրոցից պահանջվում է՝

- Ապահովել որակյալ կրթություն
- Սովորողների մոտ ձևավորել ինքնուրույն մտածելու և վերլուծելու կարողություն
- Նպաստել սովորողների հաղորդակցման և համագործակցման մշակույթի բարձրացմանը
- Երաշխավորել անձի իրավունքների պաշտպանությունը, խոսքի ազատությունը
- Սովորողների նախասիրությունների ու կարողունակությունների ձևավորումն ու ամրապնդումը նպաստող երաշխիքների ապահովում
- Ձևավորել ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
- Ձևավորել սովորել սովորելու կարողունակություն
- Նպաստել սովորողների ինքնաճանաչմանն ու ինքնազարգացմանը
- Ստեղծել բարոյահոգեբանական տրամադրող մթնոլորտ և՛ ուսուցիչների, և՛ սովորողների համար:

ա) Դպրոցն ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում

Դպրոցը կառուցվել է 1987 թվականին՝ որպես ադրբեջանական ուսուցմամբ դպրոց: 1989 թվականին վերակազմավորվել է որպես հայկական հանրակրթական դպրոց: Դպրոցի նախագծային հզորությունը 786 աշակերտի համար է: Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի հուլիսի 8-ի N844 -Ա/Ք, N845-Ա/Ք, N846-Ա/Ք հրամաններով տրված լիցենզիաների՝ դպրոցն իրավունք ունի իրականացնելու տարրական ընդհանուր(սահմանային 80 տեղով), հիմնական ընդհանուր(սահմանային 120 տեղով), միջնակարգ ընդհանուր (սահմանային 72 տեղով) կրթական ծրագրերը:

Զարգացման ծրագրով նախատեսվում է բավարարել սովորողի հետևյալ կրթական կարիքները

- Հայրենանվեր և մարդասեր
- Քննական և վերլուծական միտք ունեցող
- Սեփական կարծիքն արժևորող և այլոց կարծիքները գնահատող
- Մրցունակ
- Մասնագիտական կողմնորոշում ունեցող և դրանք վերծանող
- Մետաճանաչողական կարողունակություններով օժտված
- Համակողմանիորեն զարգացած

Կրթական միջավայրը կնպաստի սովորողի՝ որպես 21-րդ դարին բնորոշ քաղաքացու և բարձր արժեքներ կրող անհատի ձևավորմանը և կայացմանը:

բ)Համապատասխանու՞մ է պետության քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբի կարիքներին ու հնարավորություններին

Ըստ զարգացման ծրագրի՝ դպրոցի կրթությունը նպատակաուղղված է սովորողի մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը, մարդկային արժանապատվության պահպանմանը, իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը, ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը, ընտանեկան կյանքին պատրաստվածության ապահովմանը, որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

գ) Համապատասխանու՞մ է հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին

Դպրոցի ենթակառուցվածքները և հնարավորությունները

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս ՀՀ կառավարության(այսուհետև՝ հիմնադիր): Դպրոցը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Ջիլ, 5-րդ փողոց, շենք 1 հասցեում: Դպրոցը տիպային շենք է, բաղկացած 3 մասնաշենքից, որոնք գործում են ոչ ամբողջական: Դպրոցն ունի 14 դասասենյակ, 10 առարկայական կաբինետ, վարչական աշխատասենյակ, ուսուցչանոց, լաբորատորիաներ, ՆԶՊ առարկայի դասասենյակ, զենքի պահեստ, արհեստանոցներ, գրադարան-ընթեցասրահ, մարզադահլիճ, ճաշարան, հանդիսությունների սրահ, տեխնիկական նշանակության սենյակներ, համակարգչային սենյակ, սանհանգույց, առկա է ինտերնետ կապ:

Մարդկային ռեսուրսներ

Դպրոցն ունի 30 աշխատակից, որոնցից 19-ը ուսուցիչ՝ բարձրագույն կրթությամբ և մասնագիտական համապատասխան որակավորմամբ: Քանի որ դպրոցում կա «Անգլերեն» առարկայի ուսուցչի թափուր աշխատատեղ, «Անգլերեն» առարկան դասավանդվում է հեռավար ձևաչափով,որն իրականացնում են մենթոր դպրոցի ուսուցիչները:

Խորհրդակցական մարմիններ

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝ մանկավարժական խորհուրդ, կոլեգիալ կառավարման մարմին՝ խորհուրդ, ծնողական խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կանոնադրությունը,գործում է օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

Հաստատության շենքային պայմաններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը հիմնադրվել է 1987 թվականին, եռահարկ է, ունի 14 դասասենյակ, առարկայական կաբինետներ, համակարգչային սենյակ, ՆԶՊ առարկայի դասասենյակ՝ անվանակոչված 44-օրյա պատերազմում անմահացած դպրոցի սան Աշոտ Արզումանյանի անունով, լաբորատորիաներ, արհեստանոցներ:	➢ Դասասենյակներն ու լաբորատորիաներն ունեն վերանորոգման կարիք
Դպրոցն ունի մարզադահլիճ	➢ Մարզադահլիճը կարիք ունի հիմնանորոգման և նոր գույքի: ➢ Սպորտհրապարակի բացակայություն
Դպրոցն ունի նկուղային հարկ:	➢ Նկուղային հարկը հարմարեցված չէ որպես ապաստարան, բացակայում է լուսավորվածությունը :

Դպրոցն ունի նորոգված խոհանոց և ճաշարան	➢ Խոհանոցի սանհանգույցը կարիք ունի վերանորոգման
Տարածքն առանձնացված է ցանկապատով	➢ Տարածքի կանաչապատման կարիք
Դպրոցն ունի գործող 2 սանհանգույց	➢ Սանհանգույցների բացակայություն
Դպրոցն ապահովված է եռաֆազ հոսանքով, տարհանման ելքերով, տեխնիկական նշանակության սենյակներով	➢ Թեքահարթակների բացակայություն ➢ Անվտանգ ջեռուցման ապահովման բացակայություն
Դպրոցում առկա է հակահրդեհային վահանակ, տարահանման ազդանշանային համակարգ	➢ Բացակայում է ներքին հրդեհաշիջման ցանցը, հակահրդեհային անվտանգության համակարգը

Հաստատության նյութատեխնիկական բազան

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
2019 թվականին «Վորլդ վիժն» կազմակերպության կողմից դպրոցի գրադարանին տրամադրվել է 230500 ՀՀ դրամի մեթոդական և գեղարվեստական գրականություն: 2020 թվականի դեկտեմբերի 2-ին «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում «Կրթական ծրագրերի կենտրոն» պետական հիմնարկի կողմից դպրոցին հատկացվել են համակարգչային սարքավորումներ՝ 1071800 ՀՀ դրամ արժողությամբ: 2020 թվականին «Հայ դպրոց »հիմնադրամի կողմից տրամադրվել է նոր գույք՝ սեղան-աթոռներ, ուսուցչական սեղան-աթոռներ, գրատախտակներ, կախիչներ: 2020 թվականին «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը դպրոցին հատկացրել է 8 պլանշետ: 2021 թվականին Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի կողմից հեռավար ուսուցում կազմակերպելու նպատակով դպրոցին տրամադրվել է նոութբուք:	➢ Դպրոցը կարիք ունի՝ ժամանակակից տեխնիկական սարքավորումների

2021 թվականին դպրոցի ճաշարանը համալրվել է նոր գույքով՝ սառնարան, սալօջախ, ջրատաքացուցիչ, լվացարան, դարակաշարեր,սեղան: 2021 թվականին հայ կրթական հիմնարկության մասնաճյուղի և «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն » ՀԿ-ի կողմից հիմնադրվել է «Արմաթ» լաբորատորիա և դպրոցին է հանձնվել 3170000 ՀՀ դրամի համակարգչային սարքավորումներ: 2022 թվականին Կարմիր խաչի միջազգային կազմակերպությունը հեռավար դասերի համար տրամադրել է նոութբուք 627699 ՀՀ դրամ արժեքով: 2023 թվականին դպրոցի գրադարանը համալրվել է գեղարվեստական գրականությամբ:	➢ Խոհանոցային պարագաների համալրման կարիք ➢ Ժամանակակից էլեկտրոնային գրադարանի ստեղծման անհրաժեշտություն

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, դպրոցի կանոնադրությամբ և սահմանված կարգով գործող կառույց է, որի գործունեությունը նպատակաուղղված է դպրոցի զարգացմանը,առաջընթացին:	➢ Խորհրդի անդամների մի մասի՝ քննարկվող հարցերին մասնակցության պասսիվություն
Մանկավարժական խորհուրդը ձևավորված է 20 մանկավարժներից, ունեն բարձրագույն կրթություն: Մանկավարժներից շատերը ունեն մանկավարժական հարուստ փորձ,կան նաև սկսնակ ուսուցիչներ, որոնց աջակցում և ուղղորդում են հմուտ մանկավարժները:	➢ Սեմինարներին, վեբինարներին պասսիվ մասնակցություն
Աշակերտական խորհուրդը ակտիվ է, հաճախ են հանդես գալիս նախաձեռնություններով և առաջարկություններով:	➢ Ինքնավստահության , համարձակ գործելու կարողությունների սակավություն
Ծնողական խորհուրդը ներգրավված է դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներում: Կա սերտ համագործակցություն դպրոցի և ծնողների միջև: Հաճախակի են կազմակերպվում էքսկուրսիաներ և ճանաչողական այցեր:	➢ Ծնողների պասսիվ մասնակցություն տարբեր թեմաներով կազմակերպվող դասընթացներին, կրթության դերի արժևորման ոչ հստակ գիտակցում:

Հաստատության համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը համագործակցում է ՀՀ կառավարության, ԿԳՄՍ նախարարության, Գեղարքունիքի մարզպետարանի, Ճամբարակի համայնքապետարանի, ԿԶՆԱԿ-ի,ԿՏԱԿ-ի, ՏՄԱԿ-ի, ԱԻՆ-ի, ՊՆ-ի, իրավապահ մարմինների, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի հետ:	➢ Համագործակցության պասսիվություն

Հաստատության ուսումնական միջավայրը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական միջավայրը խնամված է, պահպանվում են սովորողների առողջության և անվտանգության կանոնները:	➢ Միջանցքները կահավորված և վերանորոգված չեն,դասասենյակներն ունեն վերանորոգման կարիք, բացակայում են հաշմանդամություն ունեցող աշակերտների համար խելամիտ հարմարեցումները

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի մանկավարժները անհրաժեշտության դեպքում մասնակցում են տարաբնույթ դասընթացների, որոնք նպաստում են ուսուցիչների մասնագիտական որակավորման բարձրացմանը:Ուսուցիչների մի մասը դասապրոցեսում օգտագործում են ՏՀՏ գործիքներ: Դպրոցում կազմակերպվում են ուսումնական վարժանքներ, ռազմահայրենասիրական միջոցառումներ, բաց դասեր:	➢ Դպրոցում չկան կամավոր ատեստավորված , տարակարգ ունեցող և «Տարվա լավագույնները» մրցույթին մասնակցած ուսուցիչներ: ➢ Դպրոցում կադրերի պակաս

Հաստատության տրամադրած կրթության որակը

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցը ապահովում է յուրաքանչյուր սովորողի կրթության և դաստիարակության հավասար իրավունքը , նպաստում սովորողների կարողությունների, հմտությունների, արժեքների, դիրքորոշումների զարգացմանը, մարդկային բարձր որակների, ազգային արժեքների ձևավորմանը:Դպրոցի սովորողները ակտիվ մասնակցում են օլիմպիադաների ներդպրոցական և տարածքային փուլերին: Դպրոցը մասնակցում է նաև մարզական միջոցառումներին:Կազմակերպվում են դասարանական, արտադասարանական բազմաբնույթ միջոցառումներ, որոնք միտված են զարգացնելու սովորողների գեղագիտական ճաշակը, ինքնազարգացումը և ճանաչողական ակտիվությունը:	➢ Հանրապետական օլիմպիադաներին մասնակցության պասսիվություն ➢ Օժտված սովորողների սակավություն

Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցն ունի համակարգչային 2 դասասենյակ, որոնք որոշ չափով հագեցած են տեխնիկական միջոցներով:Դասասենյակներում են անցկացվում «Ինֆորմատիկա» և «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկաների դասերը, գործնական և լաբորատոր աշխատանքները:Համակարգչային դասասենյակում են դասավանդվում «Անգլերեն» առարկայի հեռավար դասերը: ՏՀՏ-ի լիարժեք օգտագործումը հնարավորություն է տալիս դասերին կիրառելու մի շարք կրթական կայքերում տեղ գտած ինտերակտիվ դասերը: Դպրոցի սովորողները ներգրավված են «Արմաթ» լաբորատորիայի աշխատանքներում, ակտիվ մասնակցում են կազմակերպվող միջոցառումներին և մրցույթներին:	➢ Որակյալ համացանցի բացակայություն ➢ Ժամանակակից տեխնիկական միջոցների սակավություն

Հաստատությունում առկա հիմնախնդիրները

Ոլորտ	Խնդիրներ
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	• Շենքը կարիք ունի հիմնանորոգման, նյութատեխնիկական բազայի նորացման և համալրման
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	• Կառավարման և խորհրդակցական մարմինների համագործակցության ամրապնդում
Մանկավարժական համակազմ	• Մանկավարժական համակազմի կամավոր ատեստավորմանը, տարակարգին,«Տարվա լավագույնները» մրցույթին դիմելու ցանկության խրախուսում • Մանկավարժական կադրերի պակաս • Մասնագիտական կարողությունների զարգացում, նոր մեթոդաբանության ու դասի կառուցվածքի փոփոխությունների աճ
Աշակերտական համակազմ	• Մասնագիտորեն կողմնորոշված, կարողունակ,մրցունակ քաղաքացիների ձևավորում
Ծնողական համակազմ	• Ծնողները պասսիվ են տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող դասընթացներին, կրթության դերի արժևորման ոչ հստակ գիտակցում

Համագործակցություն համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	• Սովորողների՝ համայնքի կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում • Համագործակցության ամրապնդում
Ուսումնական միջավայր	• Բարեկարգ, լուսավոր, գեղեցիկ և ընդարձակ ուսումնական միջավայրի ապահովում • Սովորողների հետաքրքրություններին և նախասիրություններին համապատասխան արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ստեղծում
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	• Բարձրորակ կրթության ապահովում • Առարկայական օլիմպիադաներում ակտիվ մասնակցության և բարձր ցուցանիշների ապահովում
Տեխնոլոգիաներ և նորարարություն	• Որակյալ համացանցի ապահովում • Նորագույն տեխնոլոգիաների շարունակական ներդրում • Մանկավարժների մասնագիտական հմտությունների կատարելագործում՝ նորագույն տեխնոլոգիաների և նորարությանը համընթաց • Մեդիագրագիտության կարևորում

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	• Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը, նրանց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել համապատասխան մարմիններին

Սովորողների առաջադիմություն

	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Առաջադիմություն	100%	100%	100%	100%	100%
Որակ	33%	42.25%	41%	38,75%	44%

Սովորողների թիվ

Սեպտեմբերի 1- դրությամբ	2018-2019 ուստարի	2019-2020 ուստարի	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Աշակերտների թիվ	79	81	93	99	91

3-8 բաղադրիչներն ըստ ոլորտների ընդգրկված են Ձև 1 աղյուսակում

3.Նպատակների և խնդիրների սահմանում

4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

5.Պատասխանատուներ

6.Արդյունքների գնահատման չափանիշներ

7.Ռիսկեր

8.Գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներն ու նյութատեխնիկական պարագաները

Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան

Նպատակ-ների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունք-ների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություն-ներ	Միջոցները և նյութատեխնի-կական պարագաները
Բարեկարգ, հարմարավետ լուսավոր շենքային պայմաններ, սովորողնե-րի անվտան-գությունն ապահովող միջավայր	2024 -2025 ուստարի (Հիմնադրի միջոցներով կառուցվող շենքը շահագործ-ման կհանձնվի 2024 թվականին)	Հիմնադիր, լիազոր մարմին, տնօրեն	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվու-թյունների ձևերի ու ժամանակա-ցույցի	Ռիսկեր Համավարակ, արտակարգ դրություններ	Հիմնադիր, լիազոր մարմին, Դրամաշնորհա-յին ծրագրեր
Դպրոցի տարածքի կանաչապատում	2024-2028 թթ.	Խորհուրդ, տնօրեն, վարչատն-տեսական համակար-գող, ուսուցիչներ		Ռիսկերը մեղմող գործողություն-ներ Համաճարակա-յին կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում:	
Ժամանա-կակից էլեկտրոնա-յին գրադարան ի ստեղծում	2024-2028 թթ.	Տնօրենութ-յուն, գրադարանա վար,			

Ոլորտ 2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխա-նատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Շարունակել և ամրապնդել համագործակցությունը կառավարման և խորհրդակցական մարմինների հետ, ապահովել նաև այդ մարմինների փոխհամագործակցությունը	2023-2028թթ.	Տնօրենություն, ԿԽ, դասղեկներ,	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի՝ տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող,	Ռիսկեր Շփումների նվազում՝ պայմանավորված համավարակով և հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում, հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում:	
Հետևողականորեն վերահսկել խորհրդակցական մարմինների գործառույթների պատշաճ կատարմանը	2023-2028թթ.	Տնօրենություն, ԿԽ			

Ոլորտ 3.Մանկավարժական համակազմ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Մանկավարժական համակազմից կամավոր ատեստավորմանը,տարակարգին, «Տարվա լավագույնները» մրցույթին դիմելու ցանկության խրախուսում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի՝ տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող	Ռիսկեր Շփումների նվազում՝ պայմանավորված համավարակով և հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում, հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում, ուսուցիչների որակավորման բարձրացման ուղղությամբ	Պետական բյուջե, լիազոր մարմին, ԿԳՄՄՆ, ԿԶՆԱԿ
Սեմինարներ, վեբինարներ, ինքնակրթության, ինքնավերլուծության խթանում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ			
Մանկավարժական կադրերի համալրում					
Ներդպրոցական վերահսկողություն, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորում և իրականացում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ուսուցիչներ			
Ուսուցիչների վերապատրաստում, առաջավոր փորձի փոխանակում: Սկսնակ ուսուցիչներին մեթոդական օգնության ցուցաբերում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ, մենթոր դպրոցներ			
Դպրոցում բարոյահոգեբանական հաճելի մթնոլորտի ապահովում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,			

		ուսուցիչներ, սովորողների հետ դաս-տիարակչա-կան աշխա-տանքների համակար-գող		իրականաց-վող աշխա-տանքների խթանում	

Ոլորտ 4. Աշակերտական համակազմ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Ինքնակառավարվող և ինքնաուղղորդվող կարողունակություններով օժտված քաղաքացիների ձևավորում,ովքեր կլինեն մասնագիտորեն կողմնորոշված և մրցունակ	2023-2028 թթ.	Տնօրենություն, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, մանկավարժական համակազմ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի՝ տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող	Ռիսկեր Շփումների նվազում՝ պայմանավորված համավարակով և հեռավար հարթակներից օգտվելու հմտությունների պակաս: Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում, հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում, ուսուցիչների որակավորման բարձրացման	
Բարեկիրթ կրթական միջավայրի ստեղծում՝ • Ուսումնառության որակի բարելավում • Սովորողների ինքնավարության խթանում • Արժեհամակարգի ձևավորում	2023-2028թթ.	Տնօրենություն, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, մանկավարժական համակազմ			
Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ • Հետաքրքրությունների և նախասիրությունների բացահայտում • Ճանաչողական այցեր • Հանդիպումներ • Զրույցներ մասնագիտությունների մասին՝ հրապուրիչ և դժվար կողմեր	2023-2028թթ.	Տնօրենություն, ՄԿԱ գծով համակարգող			

				ուղղությամբ իրականացվող աշխատանքների խթանում	
Աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին	2023-2028թթ.	Տնօրենություն, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, մանկավարժական համակազմ			

Ոլորտ 5. Ծնողական համակազմ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութա տեխնիկական պարագաները
Տարբեր հասարակական կազմակերպություններ ի կողմից անցկացվող սեմինարներին մասնակցության խթանում	2023-2028թթ.	Տնօրենություն, դասղեկներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի՝ տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող	Ռիսկեր Շփումների նվազում՝ պայմանավորված համավարակով, ծնողների պասսիվություն Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում,դպրոցի հետ համագործակցության ապահովում	
Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին ակտիվ մասնակցության ապահովում	2023-2028թթ.	Տնօրենություն, դասղեկներ			
Գիտելիքների և կրթության դերը արժևորող զրույցների և դասընթացների կազմակերպում և ակտիվ մասնակցության խթանում	2023-2028թթ.	Տնօրենություն, դասղեկներ			
Դպրոցում իրականացվող տարբեր հասարակական աշխատանքներում ծնողների ներգրավվածության ակտիվացում		Տնօրենություն, դասղեկներ			

Ոլորտ 6. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Սովորողների՝ համայնքի կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում: Համայնքում իրականացվող ծրագրերում սովորողների և ծնողների մասնակցության խթանում(շաբաթ օրյակներ, ծառատունկ)	2023-2028թթ.	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող,սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, դասղեկներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի և ժամանակացույցի՝ տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, դաստիարակչական աշխատանքների համակարգող, ԾԽ,ԱԽ	Ռիսկեր Շփումների նվազում՝ պայմանավորված համավարակով , համայնքի պասսիվություն Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում,դպրոց-համայնք համագործակցության ուժեղացում	Բարեգործական ցուցահանդեսներ
Պետության կողմից տրամադրած դպրոցական աբոնենտային համակարգի կիրառումը 2-12-րդ դասարանների համար՝ նպաստելով դպրոց-մշակութային օջախ կապի ամրապնդմանը և սովորողների գեղագիտական դաստիարակության զարգացմանը	2023-2028թթ.	Տնօրեն, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, դասղեկներ, ԾԽ,ԱԽ			

Համագործակցությունների շրջանակի ընդլայնում: Հանդիպումներ համայնքի ներկայացուցիչների, հասարակական կազմակերպությունների հետ	2023-2028թթ.	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող, սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, դասղեկներ, ԾԽ, ԱԽ			

Ոլորտ 7. Ուսումնական միջավայր

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Բարեկարգ, լուսավոր, գեղեցիկ և ընդարձակ ուսումնական միջավայրի ապահովում	2024-2025 ուստարի	Հիմնադիր, լիազոր մարմին, տնօրեն	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի և ժամանակացույցի՝ տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող , սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, դասղեկներ	Ռիսկեր Ֆինանսական միջոցների սղություն Ռիսկերը մեղմող գործողություններ Ֆինանսական միջոցների նպատակային օգտագործում	Պետական բյուջե
Սովորողների հետաքրքրություններին և նախասիրություններին համապատասխան արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի ստեղծում և շարունակական զարգացում	2023-2028թթ.	Տնօրեն, ՄԿԱ գծով համակարգող , սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող, դասղեկներ			
Դասավանդման նոր տեխնոլոգիայի ներդրում դասապրոցեսում	2023-2028թթ	Տնօրեն,մանկավարժական համակազմ			

Ոլորտ 8. Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխա-նատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Բարձրորակ կրթության ապահովում, առարկայական օլիմպիադաներում ակտիվ մասնակցության և բարձր ցուցանիշների ապահովում:	2023-2028 թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ, մանկավարժական համակազմ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի՝ տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող,	Ռիսկեր Համավարակով և արտակարգ իրավիճակներով պայմանավորված սահմանափակումները Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում, դպրոցի առօրյայի լուսաբանումը դպրոցի կայքէջում և սոցիալական ցանցերում	Պետական բյուջե
Հանրակրթության պետական չափորոշչային պահանջների նվազագույն շեմը չհաղթահարած սովորողների համար ուսուցումը խթանող աշխատանքների կազմակերպում	2023-2028 թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ, մանկավարժական համակազմ			
Դաստիարակության և ուսման բովանդակությունն ապահովող անհրաժեշտ պայմանների ստեղծում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, դասղեկներ, ՄԿԱ գծով համակարգող,մանկավարժական համակազմ			

Ոլորտ 9. Տեխնոլոգիաներ և նորարարություն

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Որակյալ համացանցի ապահովում, նորագույն տեխնոլոգիաների շարունակական ներդրում,մանկավարժների մասնագիտական հմտությունների կատարելագործում՝ նորագույն տեխնոլոգիաների և նորարությանը համընթաց, մեդիագրագիտության կարևորում	2023-2028 թթ.	Տնօրենություն,ԿԶՆԱԿ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի՝ տնօրեն, տնօրենի տեղակալ, ՄԿԱ գծով համակարգող	Ռիսկեր Համավարակով և արտակարգ իրավիճակ ներով պայմանավորված սահմանափակումները Ռիսկերը մեղմող գործողություններ Համաճարակային կանոնների պահպանում, կանխարգելիչ միջոցառումների իրականացում, դպրոցի առօրյայի լուսաբանումը դպրոցի կայքէջում և սոցիալական ցանցերում	Պետական բյուջե, դրամաշնորհային ծրագրեր
Էլեկտրոնային կրթական ռեսուրսների ստեղծում և կիրառում	2023-2028 թթ.	Տնօրենություն, մանկավարժական համակազմ			
Մեդիագրագիտությունը խթանող սեմինարների, հանդիպումների կազմակերպում	2023-2028թթ.	Տնօրենություն, մանկավարժական համակազմ			
Նոր սերնդի համակարգչային տեխնիկայի համալրում	2024-2028 թթ.	Հիմնադիր, լիազոր մարմին, տնօրեն			

Ոլորտ 10. Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Նպատակների և խնդիրների սահմանում	Ժամանակացույց	Պատասխանատուներ	Արդյունքների գնահատման չափանիշներ	Ռիսկեր, ռիսկերը մեղմող գործողություններ	Միջոցները և նյութատեխնիկական պարագաները
Օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս նախագծերը քննարկման ներկայացնելիս ապահովել ուսուցիչների ակտիվ մասնակցությունը, նրանց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել համապատասխան մարմիններին	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ	Ըստ խորհրդի կողմից հաստատված հաշվետվությունների ձևերի ու ժամանակացույցի		
e-draft.am կայքում քննարկման դրված իրավական ակտերի ներկայացում	2023-2028թթ.	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման նախագահներ			

9.Ակնկալվող արդյունքներ

Գրավիչ և որակյալ կրթական միջավայր

Նոր կառուցված և նյութատեխնիկական բազայով հագեցած ժամանակակից դպրոց

Ինքնակրթությամբ զբաղվող, նորարար և ստեղծագործ ուսուցիչներ

Սոցիալ -մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց

Դպրոց- ԾԽ-ԱԽ կապի ամրապնդում և համագործակցություն

ՏՀՏ ռեսուրսային հնարավորությունների ավելացումը և դրանց կիրառումը դասերին

Սովորողների ինտեգրում համայնքի կյանքին

Սովորողների նախասիրությունները և հետաքրքրությունները բավարարող խմբակների ձևավորում

Սովորողների ակտիվ մասնակցություն առարկայական օլիմպիադաներին

Ապագա մասնագիտության մեջ կողմնորոշված սովորող

21-րդ դարի հմտություններով և կարողություններով օժտված անհատներ

10.Վերահսկողության մեխանիզմներ

- Յուրաքանչյուր գործողության համար մշակված են վերահսկողության մեխանիզմներ, որոնք հաստատվում են կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կողմից.
- Յուրաքանչյուր գործողության համար սահմանված են հաշվետվությունների ձևերն ու ժամանակացույցը, որոնք հաստատված են կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կողմից.
- Ծրագրի վերահսկողությունն իրականացվում է դպրոցի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կողմից տարեկան առնվազն երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:

N	Միջոցառում/ Գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահման-ված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման /առկայության դեպքում պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ

Հաշվետվությունը պետք է ներառի յուրաքանչյուր կատարողական ցուցանիշ կատարման մասին անհրաժեշտ փաստացի տվյալներ, հիմնավորող փաստաթղթեր, վերլուծություններ, որոնք կցվում են հաշվետվությանձևաչափին:

Եզրափակում

«Կրթությունը ամենահզոր զենքն է,
որ դու կարող ես օգտագործել
աշխարհը փոխելու համար»:
Ն. Մանդելա

2023-2028 թվականների զարգացման ծրագրում ընդգրկված բոլոր դրույթները իրատեսական են, իրագործելի,վերջնարդյունքները՝ չափելի: 2023-2028 թվականների զարգացման ծրագրով նախատեսված աշխատանքների համար արդեն առկա են ամուր նախադրյալներ.

Խնդիրները կանգ առնելու նշան չեն. դրանք ուղեցույց են՝ ճանապարհը ճիշտ շարունակելու համար...